



Անաստասիա Ստրոկինա

Անաստասիա Ստրոկինա – մանկագիր, արձակագիր, բանաստեղծուհի, բանասեր, թարգմանիչ: Մոսկվայի գրողների միության և «Գրական թարգմանության վարպետներ» թարգմանիչների գիլդիայի անդամ:

Ավարտել է Ա. Մ. Գորկու անվան Գրականության ինստիտուտը: Կվինսի համալսարանի (Բելջաստ, Մեծ Բրիտանիա) Շեյնս Հինի պոեզիայի և թարգմանության դպրոցի շրջանավարտ է: Անաստասիա Ստրոկինայի բանաստեղծությունները, թարգմանություններն ու արձակը լույս են տեսել ռուսական և արտասահմանյան բազմաթիվ ամսագրերում: Թարգմանում է արձակ և պոեզիա անգլերենից, դանիերենից, սերբերենից և ռոմանական լեզուներից: «Ինոստրաննայա լիերատուրա» («Արտասահմանյան գրականություն») ամսագրի Սոլոմոն Ապտայի հիշատակի մրցանակի դափնեկիր է, երկու անգամ հայտնվել է Ռուսաստանում Բրիտանական խորհրդի գեղարվեստական թարգմանության մրցույթի հաղթողների ցանկում (2015, 2017): «Կետը հյուսիս է լողում» վիպակը «Կնիգոտու» մրցույթի հաղթող է դարձել (2015) և արժանացել է Վ.Կ. Արսենևի անվան «Հեռավոր Արևելք» մրցանակին (2019): Երկու անգամ դարձել է Վ.Պ. Կրասիվկինի անվան միջազգային մանկական գրականության մրցույթի դափնեկիր (2014, 2018): Ռուսաստանի կողմից առաջադրվել է որպես Աստրիդ Լինդգրենի անվան միջազգային մրացանակի հավակնորդ: «Կետը հյուսիս է լողում» փրիլոսոփայական հեքիաթների ժողովածուն, «Գրպանային թզուկի հոլովները», «Քուանման գայլը», «Քոնիամպը» գրքերը և մանուկների համար նախատեսված կենսագրականները՝ «Չայկովսկի. Լուսի շքահանդես» և «Տատյանա Մավրինա. Շուրջն այնքան շատ բան կա», ընդգրկված են Միջազգային երիտասարդական հիմնադրամի գրադարանում (Մյունխեն): 2023 թվականին հրատարակվել է «Լև Տոլստոյ. Ոչինչ՝ բացի ուրախությունից» կենսապատումը: 2024 թվականին լույս է տեսել «Արևային համակարգի հանելուկները» նոր գիրքը, որը դարձել է «Տարվա գիրք» Համառուսաստանյան մրցանակի դափնեկիր:

2025 թվականին լույս է տեսել երկու նոր գիրք՝ «Ռուսաստանի հեքիաթային հերոսների ատյաս» և «Քոնգոյի երագները» փրիլոսոփայական հեքիաթը: Ստեղծագործությունները թարգմանվել են անգլերեն, ադրբեջաներեն, բելառուսերեն, իտալերեն, չինարեն, գերմաներեն, սերբերեն, սլովեներեն, էստոներեն:

